«ԲԱՑԻ՛Ր ՇԻՇԸ, ՓՈՐՁԻ՛Ր ՇԱՀԵԼ» ԱԿՑԻԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

«Բացի՛ր շիշը, փորձի՛ր շահել» գովազդային ակցիան (այսուհետ՝ **Ակցիա**) կազմակերպված է «ԿՈԿԱ-ԿՈԼԱ ՀԵԼԼԵՆԻԿ ԲՈԹԼԻՆԳ ՔԱՄՓՆԻ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ **Կազմակերպիչ**) կողմից, որի գրանցված հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, 0052, քաղաք Երևան, Թբիլիսյան խճուղի, 8/3 նրբանցք, հեռախոսահամար՝ 8088:
Ակցիան տեղի կունենա Հայաստանի Հանրապետության տարածքում:

ԲԱԺԻՆ 1. ԱԿՑԻԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՓԱԹԵԹՆԵՐԸ
Ակցիայի մասնակից դառնալու համար անհրաժեշտ է գնել «ԿՈԿԱ-ԿՈԼԱ ԿԼԱՍԻԿ», «ԿՈԿԱ-ԿՈԼԱ ԱՌԱՆՑ ՇԱՔԱՐԻ», «ՖԱՆՏԱ ՆԱՐԻՆՋ», «ՍՊՐԱՅՏ», 500 մլ կամ 1 լիտր տարողությամբ պլաստիկ շշերով ցանկացած արտադրանք (այսուհետ՝ **Արտադրանք(ներ)**), որոնք արտադրված և/կամ իրացվում են Կազմակերպչի կողմից հատուկ գովազդային պիտակներով և խաղարկային սպիտակ պլաստիկ խցաններով (այսուհետ՝ **Խցան(ներ)**):
Ակցիայի շրջանակներում բոլոր հայտերը և ներկայացված Խցանները ենթակա են ստուգման Կազմակերպչի կողմից: Խցան(ներ)ի իսկության վերաբերյալ ցանկացած վեճի դեպքում Կազմակերպչի որոշումը վերջնական է համարվում:

Ակցիայի տեղեկատվական աջակցությունն իրականացվում է հետևյալ միջոցներով.
ԹԵԺ ԳԻԾ. 80 88 հեռախոսահամար, որի գործունեությունն ապահովվում է Կազմակերպչի կողմից՝ Ակցիայի շրջանակներում տեղեկատվության հասանելիության, ինչպես նաև Ակցիայի շրջանակներում հաղորդակցության իրականացման նպատակով (այսուհետ՝ **Թեժ Գիծ**)
Չատ բոտ. Էլեկտրոնային հարթակ, որը հասանելի է Վոթսափ և Մեսսինջեր հավելվածներում հետևյալ հղումով՝ https://cokeurl.com/armpromo (**Չատ բոտ**):
ԲԱԺԻՆ 2. ԺԱՄԿԵՏՆԵՐ

ԱԿՑԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ (այսուհետ՝ **Ընդհանուր Ժամկետ**) 2024Թ.-Ի ՀՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2024Թ.Ի ՕԳՈՍՏՈՍԻ 31-Ը:

- Գլխավոր Նվերներ շահելու հնարավորության մասով Ակցիան վավեր է 2024թ. հուլիսի 5-ից մինչև 2024թ. օգոստոսի 25-ը,
- Մնացած Շահումները շահելու հնարավորության մասով Ակցիան վավեր է 2024թ. հուլիսի 1-ից մինչև 2024թ. օգոստոսի 31-ը:

Շահումներ շահող մասնակիցները հնարավորություն ունեն ստանալ դրանք սկսած 01.07.2024թ.-ից մինչև 10.09.2024թ.-ը, բացառությամբ Շահումների առանձին տեսակների համար սույն կանոններով սահմանված այլ ժամկետների:

Կոկա-Կոլա Կլասիկ 250 մլ գազավորված ըմպելիք շահող մասնակիցները հնարավորություն ունեն ստանալ տվյալ Շահումը սկսած 08.07.2024թ.-ից մինչև 10.09.2024թ.-ը:

ԿԱՐԵՎՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ. ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆ ԻՐԱՎԱՍՈՒ Է ԿԱՏԱՐԵԼ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ՝ ԱՅԴ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍԱՆԵԼԻ ԴԱՐՁՆԵԼՈՎ ՉԱՏ ԲՈՏԻ ԵՎ/ԿԱՄ ԹԵԺ ԳԾԻ ՄԻՋՈՑՈՎ:

ԲԱԺԻՆ 3. ՇԱՀՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

3.1. ԳԼԽԱՎՈՐ ՆՎԵՐ – Ուղևորություն Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաք

3.1.1. Առավելագույնը 10 (տասը) անձ հնարավորություն ունեն շահելու ուղևորություն Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաք (այսուհետ՝ Ուղևորություն կամ Գլխավոր Նվեր) 2024 թ-ի հոկտեմբերին կայանալիք միջազգային երաժշտական փառատոնին (այսուհետ՝ Փառատոն), ներկա գտնվելու համար՝ Ակցիայի պայմանների համաձայն, և պայմանով, որ առկա լինեն Հայաստանի Հանրապետությունից Արաբական Միացյալ Էմիրություններ մեկնելու համար վավեր փաստաթղթեր:
3.1.2. Գլխավոր Նվերը ներառում է Կազմակերպչի հաշվին կատարվող հետևյալ ծախսերը 2 (երկու) անձի հաշվարկով.
• Ուղիղ կամ ոչ ուղիղ թռիչք (կախված թռիչքների առկայությունից) էկոնոմ կարգով՝ Հայաստանի Հանրապետությունից՝ Երևան քաղաքից դեպի Արաբական Միացյալ Էմիրություններ Շարժա քաղաք և հետադարձ թռիչք Արաբական Միացյալ Էմիրություններից՝ Շարժա քաղաքից դեպի Հայաստանի Հանրապետություն՝ Երևան քաղաք (Կազմակերպիչն իրեն իրավունք է վերապահում ընտրել ավիաընկերությունը, թռիչքի ժամը և ամսաթիվն իր հայեցողությամբ),
• Գիշերակաց *** կամ **** (երեք կամ չորս աստղանի) հյուրանոցներից մեկում, որն ընտրվելու է Կազմակերպչի կողմից, 1 (մեկ) կամ 2 (երկու) անձի համար նախատեսված սենյակում, Դուբայ քաղաք ժամանելու օրվանից մինչև Դուբայ քաղաքից մեկնելու օրը, որի ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել 3 օրը և 2 գիշերը՝ բացառությամբ Շահող(ներ)ի կողմից հյուրանոցում կատարված ցանկացած լրացուցիչ ծախսերի,
• Փոխադրումներ (ա) Շարժա քաղաքի օդանավակայանից դեպի Դուբայ քաղաքում գտնվող հյուրանոց, հյուրանոցից դեպի Փառատոնի անցկացման վայր և հետադարձ ուղղությամբ՝ Փառատոնի անցկացման վայրից դեպի հյուրանոց, (գ) հյուրանոցից դեպի Շարժա քաղաքի օդանավակայան,
3.1.3. Ուղևորության ընթացքում կամ դրա կապակցությամբ կրած մնացած բոլոր ծախսերը, որոնք նշված չեն սույն բաժին 3-ում, ներառյալ, բայց չսահմանափակվելով այն ծախսերը, որոնք կապված են անձնագրի, վիզայի կամ մուտքի թույլտվության այլ փաստաթղթերի, ճանապարհորդական ապահովագրության, Հայաստանի Հանրապետության այլ քաղաքներից դեպի Երևան քաղաք և Երևան քաղաքից հետադարձ ուղղությամբ փոխադրման ծախսերը, անձնական ծախսերը հոգում է/են միայն Շահող(ներ)ը, և Կազմակերպիչը որևէ պարտավորություն կամ պատասխանատվություն չի կրում այդ ծախսերի համար:
3.1.4. Գլխավոր Նվեր Շահողի հետ նշված ուղևորությանը մեկնող անձը ենթակա է հաստատման Կազմակերպչի կողմից:

3.2. ՆՎԵՐ (այսուհետ՝ Նվեր(ներ)

• մինչև 20 000 հատ «Մյուզիք Ֆեստ Կոկա-Կոլայի հետ 2024» («Music Fest with Coca-Cola 2024») փառատոնի, այսուհետ՝ Ֆեստ, տոմսերից մեկը:
• մինչև 1 000 000 հատ Կոկա-Կոլա Կլասիկ 250 մլ զովացուցիչ ըմպելիք

ԳԼԽԱՎՈՐ ՆՎԵՐԸ, ՆՎԵՐՆԵՐԸ ՄԻԱՍԻՆ՝ ՇԱՀՈՒՄՆԵՐ, ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐՆ ԱՌԱՆՁԻՆ ՆԱԵՎ՝ ՇԱՀՈՒՄ

ԲՈԼՈՐԸ՝ ըստ հիմնապաշարի առկայության:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. Շահումների քանակը սահմանափակվում է սույն բաժին 3-ում նշված քանակներով: Շահումների ընդհանուր քանակը ոչ մի դեպքում չի կարող գերազանցել սույն բաժին 3-ում նշված քանակները:

ԲԱԺԻՆ 4. ԱԿՑԻԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇԱՀՈՒՄ

4.1. Ակցիայի մասնակից (այսուհետ՝ **Մասնակից**) է համարվում այն անձը, ով սույն կանոններով սահմանված պայմաններին համապատասխան իրավասու է մասնակցել Ակցիային և իրականացնում է

Ակցիային մասնակցելու համար անհրաժեշտ սույն բաժնով սահմանված բոլոր գործողությունները: Ակցիան կազմակերպված է միայն Արտադրանքներն անմիջական սպառողների համար և դրա հիմնական նպատակն է վերջիններիս շրջանակում Արտադրանքի հանդեպ հետաքրքրության պահպանումը, բարձրացումը և Արտադրանքի ապրանքանիշերի ճանաչելիության աճը:

4.2. Ակցիայի շրջանակներում շահող (այսուհետ՝ **Շահող**) է համարվում այն Մասնակիցը, ով սույն կանոններով սահմանված պայմաններին համապատասխան շահում է որևէ Շահում և ում Շահող լինելը հաստատվում է Կազմակերպչի կողմից՝ սույն կանոններին համապատասխան:

4.3. Ակցիային մասնակցելու համար անհրաժեշտ է գնել որևէ Արտադրանք և գտնել «Coca-Cola_250 ml» տեքստը կամ 10-անիշ հատուկ կոդ (այսուհետ՝ **Կոդ**) Խցանի ներսում (Արտադրանքի արտադրության ժամանակ պատահական կերպով տեղակայված Խցանների ներսում):

4.4. Խցանի ներսում «Coca-Cola_250 ml» տեքստը հայտնաբերելու դեպքում մասնակիցը շահում է 1 (մեկ) հատ Կոկա-Կոլա Կլասիկ 250 մլ զովացուցիչ ըմպելիք, որի ստացման կարգը սահմանվում է սույն Կանոնների 5.5.2. կետով:

4.5. Իսկ Խցանի ներսում սույն Կանոնների 4.4. կետով սահմանված տեքստից տարբերվող Կոդ հայտնաբերելու դեպքում անհրաժեշտ է գրանցել Կոդը ստորև նշված տարբերակով.

ա) Ակտիվացում Չատբոտի միջոցով՝ անվճար կարգով գրանցվելով և մուտքագրելով Կոդը Չատբոտ էլեկտրոնային հարթակում:

- Չատբոտում գրանցվելու համար անհրաժեշտ է. Սկանավորել Ակցիային մասնակցող փաթեթի վրա տեղակայված QR կոդը, որը մասնակցին կուղղորդի Կոկա-Կոլայի վեբ-կայք,
- Կոկա-Կոլայի վեբ-կայքում անհրաժեշտ է ընտրել առաջարկվող երկու Չատբոտերից նախընտրելի տարբերակը և շարունակել Կոդի ակտիվացման գործընթացը Չատբոտում հետևալ տարբերակով՝
- Ընտրել առաջարկվող լեզուներից նախընտրելի տարբերակը
- Ծանոթանալ Ակցիայի ընդհանուր դրույթներին և պայմաններին և հաստատել համաձայնությունը
- Հաստատել մարքեթինգային պայմաններին համաձայնությունը, անցնել բոլոր անհրաժեշտ քայլերը,
- Մուտքագրել անուն, ազգանունը
- Մուտքագրել տարիքը պահանջվող երկնիշ թվի ձևաչափով
- Մուտքագրել հեռախոսահամարը հետևյալ ձևաչափով՝ 374XXXXXXXX

Վերոնշյալ քայլերի կատարումից հետո Չատբոտը ակտիվ կլինի Խցանի տակ գտնված 10-անիշ կոդի ակտիվացման համար: Անհրաժեշտ է Չատբոտի նամակի պատուհանում հավաքել Խցանի տակ հայտնաբերված 10-անիշ կոդը՝ օգտագործելով լատինատառ այբուբեն, սեղմել ուղարկելու կոճակը և ստանալ Կոդի ակտիվացման պատասխանը:

ԾԱՆՈՒՑՈՒՄ. Չատբոտը ակտիվացնելու համար հասանելի կլինի 2024 թվականի հուլիսի 1-ից:

4.6. Կոդերը կարող են ակտիվացվել ՄԻԱՅՆ սկսած 2024 թվականի հուլիսի 1-ից: Յուրաքանչյուր Կոդ կարող է ակտիվացվել միայն մեկ անգամ: Եթե Մասնակիցը սխալ Կոդ է ուղարկել, կամ եթե նույն Կոդն ուղարկվել է Մասնակցի կողմից ավելի քան մեկ անգամ, կամ եթե նույն Կոդն ուղարկվել է տարբեր

Մասնակիցների կողմից, ապա Մասնակիցը կստանա պատասխան հաղորդագրություն, որ այդ Կոդն անվավեր է: Այդպիսի Կոդն անվավեր կհամարվի և չի ներառվի վիճակահանության մեջ: Ցանկացած Կոդ, որը կակտիվացվի 2024 թվականի օգոստոսի 31-ի 23:59-ից հետո, կհամարվի ԱՆՎԱՎԵՐ:

Մեկ Մասնակցի կողմից մեկ օրացուցային օրվա ընթացքում կարող են ակտիվացվել առավելագույնը 10 Կոդ՝ Չատբոտի միջոցով: Նշված առավելագույն քանակը մեկ օրացուցային օրվա ընթացքում գերազանցելու դեպքում Մասնակիցը կստանա հետևյալ. «Դուք գերազանցել եք Կոդերի ակտիվացումների օրական առավելագույն քանակը:»:

Ակցիայի շրջանակներում միևնույն Մասնակիցն իրավունք ունի շահել Գլխավոր նվերը միայն մեկ անգամ: Միևնույն Մասնակցի կողմից երկու և ավելի անգամ Գլխավոր նվերը շահելու պարագայում դրանք համարվելու են անվավեր, տվյալ Շահումի մասով տվյալ Մասնակցի Շահող լինելը չի հաստատվում և նման Գլխավոր նվերները ենթակա չեն տրամադրման:

4.7. Շահումներ շահողներն ընտրվելու են Ակցիայի շրջանակներում գովազդային վիճակախաղի իրականացման համար նախատեսված հատուկ մշակված համակարգչային ծրագրի կիրառմամբ՝ էլեկտրոնային եղանակով անցկացվող վիճակահանության միջոցով, որը պատահական կարգով ընտրելու է շահող Կոդը պատշաճ կարգով ակտիվացված Կոդերից:

4.7. Մասնակցի կողմից ակտիվացրած յուրաքանչյուր Կոդը Շահումներից մեկը շահելու միայն մեկ հնարավորություն է ընձեռում:

4.8. Գլխավոր Նվեր շահած Մասնակիցները շահած Կոդով Խցանը և շահելու մասին հաղորդագրությունը, ինչպես նաև սույն Կանոնների 4.10 կետով սահմանված հեռախոսահամարն իրեն պատկանելու փաստը հավաստող ապացույցը պարտավոր են պահպանել իրենց մոտ և Նվերն ստանալու ժամանակ ներկայացնեն այն՝ Գլխավոր Նվեր շահելու փաստը և տվյալ Մասնակցին որպես Շահող հաստատելու համար: Կոդը կհամարվի անվավեր՝ առանց Կազմակերպչի համար որևէ պարտավորություն ստեղծելու, և տվյալ Մասնակիցը չի համարվի Շահող սույն Ակցիայի շրջանակներում, եթե այն անձը, ով գրանցել է այդ Կոդը Չատբոտում, չի կարող ներկայացնել նույն Կոդով Խցանը և/կամ շահելու մասին հաղորդագրությունը՝ Նվերն ստանալու պահին/համար:

4.9. Մասնակցի նույնականացման համար օգտագործվելու է Մասնակցի հեռախոսահամարը (այսուհետ՝ **Հեռախոսահամար**)՝ ըստ հետևյալ կարգի.
եթե Կոդն ակտիվացվել է Չատբոտի միջոցով՝ ըստ այն հեռախոսահամարի, որը նշվել է «Կոնտակտային հեռախոսահամար» դաշտում:

Վերը նշված տարբերակով Կոդն ակտիվացնելու միջոցով Մասնակիցը հաստատում է, որ ինքն իրավունք ունի մասնակցելու Ակցիային, և որ նա ինքնաբերաբար հետևելու է սույն կանոնների բոլոր դրույթներին (այսուհետ՝ **Ակցիայի Կանոններ**):

ԲԱԺԻՆ 5. ՇԱՀՈՂ ՀԱՅՏԵՐԸ ԵՎ ԽՑԱՆՆԵՐԸ

5.1. Մասնակիցները կարող են ստանալ Շահում(ներ)ը միայն Ակցիայի Կանոնների բաժին 2-ում նշված ժամանակահատվածում, սույն բաժնով սահմանված կարգով:
5.2. Շահում(ներ)ի համար բոլոր հայտերը ենթակա են ստուգման Կազմակերպչի կողմից:
5.3. Շահումների պատկերը, չափը, գույնը և այլ հատկություններ կարող են ցանկացած պահի փոփոխվել Կազմակերպչի կողմից՝ իր հայեցողությամբ:
5.4. Կազմակերպիչը որևէ պարտավորություն չի կրում այն ծախսերի համար, որոնք կարող են կրել Մասնակիցներն Ակցիային մասնակցելու կապակցությամբ:

5.5. Շահողները կարող են ստանալ իրենց Շահումները հետևյալ կարգով.
5.5.1. Ուղևորություն շահողները կարող են ստանալ իրենց նվերները «ԿՈԿԱ-ԿՈԼԱ ՀԵԼԼԵՆԻԿ ԲՈԹԼԻՆԳ ՔԱՄՓՆԻ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲ ընկերության գրասենյակից (հասցե՝ ք. Երևան, Թբիլիսյան 8/3):
5.5.2. Կոկա-Կոլա Կլասիկ 250մլ գազավորված ըմպելիք շահողները կարող են ստանալ իրենց Նվերները՝ այցելելով սույն կետով սահմանված հասցեներում գտնվող նվերների ստացման կետերը, սահմանված ժամերի ընթացքում՝ ներկայացնելով շահող կոդով Խցանը, տրամադրելով տվյալ Խցանը և ստանալով տվյալ տեսակի Նվերը։
Նվերների ստացման 208 կետերը տեղակայված են Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և հասանելի են հետևյալ հղումով՝
https://preview-p58902-e658605.adobeaemcloud.com/content/onexp/am/hy/offerings/summer-promo-2024-stores.html

5.5.3. Ֆեստի տոմսեր շահողները կարող են ստանալ իրենց Նվերները էլեկտրոնային տարբերակով՝ Չատբոտի միջոցով, մասնավորապես՝ Ֆեստի տոմսը շահելու մասին հաղորդագրությունը ստանալուց հետո 24 ժամվա ընթացքում պատասխան նամակով ուղարկվում է տոմսի էլեկտրոնային տարբերակը։

Կազմակերպիչն իր հայեցողությամբ կապ կհաստատի Նվերներ շահած Մասնակիցների հետ՝ Հեռախոսահամարի միջոցով՝ հեռավար կերպով իրականացնելու տվյալների նախնական ստուգում և իրականացնելու տվյալ Մասնակցի Շահող հանդիսանալու նախնական հաստատում, եթե նման ստուգման արդյունքում պարզ դառնա, որ Ակցիայի Կանոններին համաձայն տվյալ անձը կարող է հանդիսանալ Շահող, կամ մերժում, եթե նման ստուգման արդյունքում պարզ դառնա, որ Ակցիայի Կանոնների համաձայն տվյալ անձը չի կարող հանդիսանալ Մասնակից կամ Շահող։ Սույն կետով սահմանված գործողությունների արդյունքում որպես Նվերի Շահող նախնական հաստատված Մասնակցին Կազմակերպիչը Հեռախոսահամարի միջոցով տեղեկացնում է Նվերների հանձնման գործընթացի մանրամասների վերաբերյալ։ Որպես Նվերի Շահող վերջնական հաստատվելու և Նվերը ստանալու համար, կախված Նվերի տեսակից, ըստ Կազմակերպչի պահանջի, Մասնակիցը պարտավոր է ներկայացնել իր՝ անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը, համապատասխան շահող Կոդով Խցանը, ինչպես նաև Հեռախոսահամարն իրեն պատկանելու փաստը հավաստող ապացույցը՝ Կազմակերպչի համապատասխան ներկայացուցչին, ինչպես նաև պարտավոր է Նվերը տրամադրող անձին հանձնել անձը հաստատող փաստաթղթի պատճենը, համապատասխան շահող Կոդով Խցանը, պարտավոր է ստորագրել Նվերի ստացման վերաբերյալ ակտը և տրամադրել Կազմակերպչի համապատասխան ներկայացուցչին. նշված գործողություններից ցանկացածը կատարելուց հրաժարվելու կամ կատարելու անհնարինության դեպքում Կազմակերպչի հայեցողությամբ Նվերը ենթակա չէ հանձնման և Կազմակերպիչն իրավասու է անվավեր համարել նշված Շահումը՝ չունենալով որևէ լրացուցիչ պարտականություն տվյալ Մասնակցի հանդեպ։

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. Եթե Կազմակերպչից անկախ ցանկացած պատճառով անհնար լինի կապ հաստատել Մասնակցի հետ Հեռախոսահամարի կամ Չատբոտում նշված էլեկտրոնային հասցեի միջոցով՝ մինչև Նվերների հանձնման վերջնաժամկետը, ապա Կազմակերպիչն իրավասու է անվավեր համարել տվյալ Շահումը՝ չունենալով որևէ լրացուցիչ պարտականություն Մասնակցի հանդեպ։ Մասնակիցը կրում է ճշգրիտ և վավեր հեռախոսահամարի և/կամ էլեկտրոնային հասցեի տրամադրման պարտականությունը և դրա ոչ պատշաճ կատարման հետևանքով առաջացած բոլոր ռիսկերը։

ԲԱԺԻՆ 6. ԳԼԽԱՎՈՐ ՆՎԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

6.1. Գլխավոր Նվեր(ներ)ի յուրաքանչյուր Շահող, օգտագործելով Ուղևորությունը, պետք է մեկնի Արաբական Միացյալ Էմիրություններ՝ Դուբայ քաղաք, միայն Կազմակերպչի կողմից նշված օրերին և թռիչքով, և պետք է մնա Արաբական Միացյալ Էմիրություններում՝ Դուբայ քաղաքում, Կազմակերպչի կողմից նշած ժամանակահատվածում, Կազմակերպչի կողմից նշված վայրերում՝ համաձայն դեպի Արաբական Միացյալ Էմիրությունների՝ Դուբայ քաղաք Ուղևորության երթուղու, և պետք է վերադառնա

Հայաստանի Հանրապետություն՝ Երևան քաղաք, Կազմակերպչի կողմից տրամադրված ավիատոմսերի համաձայն: Ուղևորության ողջ ընթացքում Շահող(ներ)ը պետք է խստորեն հետևեն Կազմակերպչի կողմից սահմանված ցուցումներին և ժամանակացույցին:

6.2. Շահողը պետք է ներկայացնի Կազմակերպչին կամ նրա կողմից լիազորված անձին Ուղևորության համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճենները և բնօրինակները, ներառյալ՝ անձնագրերի, մուտքի իրավունք վերապահող փաստաթղթերի և/կամ վիզաների պատճենները, ըստ անհրաժեշտության, Հայաստանի Հանրապետությունից՝ Երևան քաղաքից դեպի Արաբական Միացյալ Էմիրությունների՝ Դուբայ քաղաք նախատեսված մեկնման օրվանից առնվազն 20 (քսան) օր առաջ: Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում թռիչքների բացակայության, դրանց չեղարկման կամ ուշացումների և/կամ դրանց արդյունքում Ուղևորության չեղարկման համար: Ուղևորության վավերության ժամկետը սահմանափակվում է Ուղևորության ավիատոմսերում նշված օրերով և/կամ Կազմակերպչի կամ նրա կողմից նշանակված անձի կողմից տրված Ուղևորության տոմսերով:

6.3. Ուղևորություն Շահողը պատասխանատու է Արաբական Միացյալ Էմիրությունների՝ Դուբայ քաղաք ուղևորվելու համար գործող և պահանջվող ժամկետով վավեր անձնագիր և Կազմակերպչի կողմից ու հայեցողությամբ սահմանված այլ անհրաժեշտ թույլտվություններ և փաստաթղթեր ստանալու համար:

6.4. Եթե Շահող(ներ)ը չի/չեն բնակվում Հայաստանի Հանրապետությունում՝ Երևան քաղաքում, Կազմակերպիչը չի նախաձեռնելու և պարտավոր չէ վճարել Շահող(ներ)ի՝ Երևան քաղաք ժամանելու/մեկնելու և գիշերակացի՝ ինչպես Հայաստանի Հանրապետությունից՝ Երևան քաղաքից Արաբական Միացյալ Էմիրությունների՝ Դուբայ քաղաք, մեկնելուց առաջ, այնպես էլ Արաբական Միացյալ Էմիրությունների՝ Դուբայ քաղաքից Հայաստանի Հանրապետություն՝ Երևան քաղաք վերադառնալուց հետո՝ դեպի իր բնակության վայր վերադառնալու կապակցությամբ առաջացած ծախսերը:

6.5.Կազմակերպիչը որևէ պարտավորություն չի ունենա, եթե Շահողը՝ Կազմակերպչից անկախ որևէ պատճառով չի կարող օգտվել Ուղևորությունից, ներառյալ՝ Ուղևորության համար անհրաժեշտ որևէ փաստաթղթերի բացակայությունը կամ որևէ այլ պատճառ, ներառյալ (բայց չսահմանափակվելով) Շահող(ներ)ի ուշացումը Երևանի օդանավակայանում: Շահող(ներ)ը ՉԻ/ՉԵՆ ԿԱՐՈՂ ՓՈԽԱՆՑԵԼ դեպի Արաբական Միացյալ Էմիրությունների՝ Դուբայ քաղաք, Ուղևորություն հայցելու իր իրավունքը որևէ այլ անձի:

Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում այն հանգամանքների առկայության դեպքում, որոնք խոչընդոտում են Շահող(ներ)ին օգտվել Ուղևորությունից՝ Կազմակերպչից անկախ առաջացած պատճառներով՝ ներառյալ, բայց չսահմանափակվելով հետևյալ պատճառներով՝

• Փառատոնին ներկա գտնվելու նպատակով դեպի Արաբական Միացյալ Էմիրություններ՝ Դուբայ քաղաք մեկնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի, թույլտվությունների կամ վիզաների չստանալը և/կամ ստանալու անկարողությունը,

• հանրային գերատեսչությունների արգելքը կամ սահմանափակումը մուտք գործել և/կամ մեկնել՝ Հայաստանի Հանրապետության, Արաբական Միացյալ Էմիրություններ Դուբայ քաղաքի կամ այդ ուղում ընդգրկված տարանցիկ երկրների/բնակավայրերի տարածք/ տարածքից՝ Հայաստանի Հանրապետությունից դեպի Արաբական Միացյալ Էմիրություններև հետադարձ ուղղությամբ՝ տարածք մտնելու և այնտեղից դուրս գալու վերաբերյալ, Արաբական Միացյալ Էմիրությունների՝ Դուբայ կամ տրանզիտ երկրների տարածք մուտք կամ ելք գործելու վերաբերյալ՝ Հայաստանի Հանրապետությունից դեպի Արաբական Միացյալ Էմիրություններ՝ Դուբայ և հետադարձ ուղղությամբ ողջ երթուղու ընթացքում,

• Ուղևորության հետ կապված Շահող(ներ)ի ակնկալիքների անհամապատասխանությունը,

• Հայաստանի Հանրապետության և/կամ Արաբական Միացյալ Էմիրությունների համապատասխան պաշտոնատար անձանց մերժումը մուտքի կամ ելքի թուլտվություն տրամադրելու, ելքի և/կամ մուտքի թույլտվություն կամ Ուղևորության համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր տրամադրելու վերաբերյալ:

6.7. Ուղևորության ողջ ընթացքում Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում Շահող(ներ)ի առողջությանը (կյանքին) և/կամ գույքին հասցված վնասի համար, ինչպես նաև երրորդ անձանց առողջությանը (կյանքին) և/կամ գույքին հասցված վնասի համար:

6.8. Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում այն դեպքում, եթե անվտանգության կամ այլ պատճառներով Փառատոնը չեղյալ է համարվում, որոշում է կայացվում անցկացնել Փառատոնն առանց աջակիցների, կամ փոխվում են Փառատոնի ամսաթվերը կամ վայրը, կամ եթե ցանկացած պատճառով Փառատոնին ներկա գտնվելն անհնար է լինում:

ԿԱՐԵՎՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ: ԿԱԶՄԱԿԵՐՊՉԻ ԿՈՂՄԻՑ ԱԿՑԻԱՅԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՇԱՀՈՒՄՆԵՐԸ ՈՉ ՄԻ ԴԵՊՔՈՒՄ ՉԵՆ ԿԱՐՈՂ ՕԳՏԱԳՈՐԾՎԵԼ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՄ ՎԵՐԱՎԱՃԱՌՔԻ ՀԱՄԱՐ: ՍՈՒՅՆ ՊԱՅՄԱՆԻՆ ՀԱԿԱՍՈՂ ՈՐԵՎԷ ՎԱՃԱՌՔ ՀԱՄԱՐՎԵԼՈՒ Է ԿՈԿԱ-ԿՈԼԱ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (THE COCA-COLA COMPANY) ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՉԹՈՒՅԼԱՏՐՎԱԾ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ, ԵՎ ՎԵՐՋԻՆՍ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ, ԻՐԱՎՈՒՆՔ ԿՈՒՆԵՆԱ ՆԱԽԱՁԵՌՆԵԼ ԲՈԼՈՐ ԱՅՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿՀԱՄԱՐԻ:

ԲԱԺԻՆ 7. ԱԿՑԻԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

7.1. Ակցիային կարող են մասնակցել 14 (տասնչորս) տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները կամ ռեզիդենտները՝ բացառությամբ Կոկա-Կոլա ընկերության (The Coca-Cola Company), Կոկա-Կոլա Մեշրուբաթ Պազարլամա Դանըշմանլիկ Սանայի վե Թիջարեթ Ա.Շ.-ի (Coca-Cola Meşrubat Pazarlama Danısmanlık Sanayi ve Ticaret A.S.) դրանց մասնաճյուղերի և կախյալ ընկերությունների, Կազմակերպչի, նրանց տեղական ներկայացուցիչների, Ակցիան գովազդող գործակալությունների և/կամ վիճակահանություն կազմակերպող և/կամ ցանկացած այլ գործակալությունների, որոնք փոխկապակցված են սույն Ակցիայի հետ, կամ մասնակցող դիստրիբյուտորների աշխատողները, աղբի կամ ցանկացած այլ թափոնների վերամշակման կազմակերպությունների աշխատողների (ներառյալ, բայց չսահմանափակվելով, պլաստիկ շշերի վերամշակման ընկերությունների) կամ ցանկացած այլ ոլորտում գործունեություն ծավալող կազմակերպությունների աշխատողների, ում մոտ Խցանների առկայությունը պայմանավորված է գործունեության բնույթով, նշված ոլորտում ծառայություններ մատուցողների, ինչպես նաև նշված անձանց (աշխատողների կամ ծառայություն մատուցողների) ընտանիքի անդամների կամ այլ կերպ փոխկապակցված անձանց: Ըստ անհրաժեշտության, Կազմակերպիչն իրավասու է նշված ոլորտներում գործունեություն ծավալող կազմակերպություններին ուղարկել համապատասխան հարցումներ՝ վերջիններիս աշխատողների վերաբերյալ սույն Կանոնների կամ Մասնակիցների շրջանակում փոխկապակցված անձանց բացահայտման կամ նմանատիպ այլ տեղեկությունների ճշգրտման նպատակով՝ ՀՀ կիրառելի օրենսդրությանը համապատասխան:

7.2. Կազմակերպիչը իրավունք ունի (բայց պարտավոր չէ) պահանջել ցանկացած Մասնակցից նրա տարիքը հաստատող փաստաթղթեր, կամ սույն Կանոններով սահմանված պահանջներին համապատասխանության վերաբերյալ ցանկացած այլ փաստաթղթեր, սույն Կանոններով սահմանված սահմանափակումների առկայությունը հավաստող/բացառող ցանկացած կիրառելի փաստաթղթեր, և իրավունք ունի մերժել Նվեր(ների)ը տրամադրելն այն Մասնակցին, ում տարիքը (ըստ փաստաթղթերի կամ ըստ Կազմակերպչի կարծիքի) ցածր է սույն բաժնում նշված նվազագույն տարիքից կամ ով Խցանը ձեռք է բերել ոչ որպես Արտադրանքի սպառող կամ սույն Կանոններին համապատասխան չի կարող հանդիսանալ Մասնակից կամ Շահող:

ԲԱԺԻՆ 8. ԽՑԱՆՆԵՐԻ ԻՄԿՈՒԹՅՈՒՆԸ

8.1. Կազմակերպիչն իրեն իրավունք է վերապահում տպել, կնքել դրոշմել կամ այլ կերպ տեղադրել մեկ կամ ավելի գաղտնի կամ թաքնված նշաններ, և/կամ գաղտնի ծածկագրեր, և/կամ թվեր, և/կամ տառեր (այսուհետ բոլորը միասին՝ Գաղտնի Ծածկագր(եր)), որոնք հայտնաբերելու դեպքում Կազմակերպիչը հստակորեն կսահմանի և կորոշի, թե արդյոք Մասնակցի կողմից ներկայացված ցանկացած Խցան վավեր է, թե կեղծ: Որևէ վեճի դեպքում Կազմակերպիչն իրավունք ունի չբացահայտելու Գաղտնի Ծածկագիր(գրեր)ը մինչև հայտերի ներկայացման վերջին օրը՝ ինչպես նշված է Ակցիայի Կանոններում:

Մասնակցելով սույն Ակցիային՝ Մասնակիցները հատկապես համաձայնվում են, որ նրանք չեն կարող որևէ կերպ վիճարկել սույն կետում նշված Կազմակերպչի՝ տեղեկատվությունը չհրապարակելու իրավունքը:
8.2. Ցանկացած Խցան, որը կեղծված է, ներառյալ ցանկացած մանիպուլյացիայի դեպքում Խցանի հետ՝ առանց որևէ սահմանափակման, առոչինչ է համարվելու:
8.3. Ցանկացած Խցան, որն անընթեռնելի է, ծռմռված, փոփոխված, կրկնօրինակված, կեղծված, կտրատված, վնասված, պարունակում է տպագրական, տիպաբանական կամ այլ սխալներ, կամ ձեռք է բերվել ոչ օրինական ձևով, առոչինչ է համարվում: Կազմակերպիչն իրավունք ունի մերժելու ցանկացած հայտ, եթե կարծում է, որ այն կեղծ է, կամ եթե հիմնավոր պատճառ ունի կարծելու, որ որևէ պատճառով՝ ներառյալ արտադրողի սխալը, որևէ Խցան շահող Խցան չէ:
8.4. Շահող հայտի վավերության և/կամ Խցան(ներ)ի իսկության վերաբերյալ ցանկացած վեճի դեպքում Կազմակերպչի որոշումը վերջնական է համարվում: Կազմակերպիչը պարտավոր չէ չշահող հայտերի կապակցությամբ որևէ նամակագրության մեջ մտնել կամ տալ բացատրություններ:
8.5. Կազմակերպիչը որևէ պարտավորություն չի կրում Խցան(ներ)ի սեփականության հետ կապված վեճերի դեպքում: Այն անձը, ով ներկայացրել է շահող Կոդ(եր)ով Խցան(ներ)ը Կազմակերպչին, համարվում է դրա իրական սեփականատերը:
8.6. Կազմակերպիչը պարտավոր չէ չշահող հայտերի կապակցությամբ որևէ նամակագրության մեջ մտնել կամ տալ որևէ բացատրություններ դրանց վերաբերյալ:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ.
Այն Խցանները, որոնց վրա առկա են արտաքին մեխանիկական մշակման հետքեր, ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ լվացման, Խցանների՝ որպես հումք վերամշակման գործընթացի ցանկացած փուլում տեսակավորման/սորտավորման հետևանքներ, ինչպես նաև այն Խցանները, որոնց վրա բացակայում է համապատասխան դրոշմապիտակը, համարվում են վնասված և մանիպուլյացված, ուստի համարվում են սույն կետի իմաստով առոչինչ: Նման Խցանների հիման վրա հայտերը ենթակա են մերժման:

ԲԱԺԻՆ 9. ԿԱՆԽԻԿ ԳՈՒՄԱՐՈՎ ՇԱՀՈՒՄՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԱՐԳԵԼՔԸ
9.1. Ոչ մի դեպքում չի թույլատրվում փոխարինել Շահում(ներ)ը կանխիկ գումարով կամ այլ միջոցներով::

ԲԱԺԻՆ 10. ՄԱՍՆԱԿԻՑ(ՆԵՐ)Ի ԵՎ ՇԱՀՈՂ(ՆԵՐ)Ի ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ
10.1. Շահումների տրամադրումը կարող է կազմակերպվել որպես հանրային միջոցառում՝ ընդգրկելով լրատվամիջոցներ, ձայնագրում, լուսանկարահանում և տեսանկարահանում: Մասնակցելով սույն Ակցիային՝ Մասնակից(ներ)ը, ինչպես նաև ցանկացած այլ անձ, ով ուղեկցում է շահողին հանրային միջոցառմանը (եթե այդպիսին կազմակերպվի) շահելու դեպքում համաձայնում են և պարտավորվում են նաև գրավոր համաձայնություն տալ, որ իրենց անունը և լուսանկարը կարող են հրապարակվել և օգտագործվել ձայնային, լուսանկարչական նյութերում և տեսանյութերում Կազմակերպչի կողմից՝ իր իսկ հայեցողությամբ, առանց որևէ հատուցման: Շահողները պարտավոր են տեղեկացնել և նախազգուշացնել բոլոր ուղեկցող անձանց այս նախապայմանի մասին այն պարագայում, եթե կազմակերպվում է հանրային միջոցառում:
10.2. Ի լրումն վերոհիշյալի՝ Մասնակիցները տեղեկացվում և համաձայնվում են, Կազմակերպիչը կարող է կատարել Շահող(ներ)ի լուսանկարահանում/ տեսահանում և ձայնագրում, և կարող է օգտագործել այդ նյութերը սույն բաժին 10-ում նշված ձևերով: Յուրաքանչյուր Մասնակից, ով դիմում է կամ դիմել է Շահում ստանալու համար, ընդունելով Ակցիայի Կանոնները և մասնակցելով Ակցիային, տալիս է իր համաձայնությունը, որ իր անունը, հեռախոսահամարները և լուսանկարները/տեսանյութերը և ձայնագրությունները կարող են հրապարակվել ցանկացած ձևով՝ ինչպես որ Կազմակերպիչը նպատակահարմար կգտնի իր հայեցողությամբ և կարող են օգտագործվել Կազմակերպչի կողմից ցանկացած ձայնագրություններում, լուսանկարահանումներում և տեսանյութերում՝ առանց Մասնակիցների հավելյալ համաձայնության կամ թույլտվության, առանց որևէ փոխհատուցման

վճարման և առանց նրանց լրացուցիչ տեղեկացման, եթե այլ բան ուղղակիորեն չի պահանջվում Հայաստանի Հանրապետության կիրառելի օրենսդրությամբ:

ԲԱԺԻՆ 11. ՏՎՅԱԼՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

11.1. Սույն Ակցիայի ընթացքում Մասնակիցների կողմից կարող է պահանջվել տրամադրել որոշակի անձնական տվյալներ: «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համաձայն անձնական տվյալ է համարվում ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը:

11.2. Սույն Ակցիայի ընթացքում Կազմակերպիչը հանդիսանում է անձնական տվյալների մշակող: «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համաձայն անձնական տվյալների մշակում է համարվում անկախ իրականացման ձևից և եղանակից (այդ թվում՝ ավտոմատացված, տեխնիկական ցանկացած միջոցներ կիրառելու կամ առանց դրանց) ցանկացած գործողություն կամ գործողությունների խումբ, որը կապված է անձնական տվյալները հավաքելու կամ ամրագրելու կամ մուտքագրելու կամ համակարգելու կամ կազմակերպելու կամ պահպանելու կամ օգտագործելու կամ վերափոխելու կամ վերականգնելու կամ փոխանցելու կամ ուղղելու կամ ուղեփակելու կամ ոչնչացնելու կամ այլ գործողություններ կատարելու հետ, իսկ անձնական տվյալներ մշակող է հանդիսանում պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինը, պետական կամ համայնքային հիմնարկը կամ կազմակերպությունը, իրավաբանական կամ ֆիզիկական անձը, որը կազմակերպում և (կամ) իրականացնում է անձնական տվյալների մշակում:

11.3. Ակցիայի կազմակերպման անհրաժեշտությունից ելնելով Կազմակերպչից բացի Մասնակիցների անձնական տվյլաների մշակող կարող է հանդիսանալ նաև Կազմակերպչին ծառայություններ մատուցող ընկերություն(ներ)ը:

11.4. Ակցիայի ընթացքում Մասնակիցների կողմից տրամադրված անձնական տվյալներն օգտագործվելու են բացառապես սույն Ակցիայի կազմակերպման համար:

11.5. Մասնակիցներն ընդունում են, որ իրենց կողմից տրամադրված անձնական տվյալները մշակվում են Կազմակերպչի կամ վերջինիս ծառայություններ մատուցող ընկերության կողմից օրենսդրությանը համապատասխան: Միևնույն ժամանակ Մասնակիցներն ընդունում են, որ իրենց կողմից որոշակի անձնական տվյալների տրամադրումն անհրաժեշտ է Ակցիայի մասնակցության համար: Կազմակերպչի կողմից պահանջվող տեղեկատվությունը Մասնակցի կողմից չտրամադրելու պարագայում Մասնակիցը զրկվում է Ակցիային մասնակցելու հնարավորությունից:

11.6. Կազմակերպիչը և/կամ վերջինիս ծառայություններ մատուցող ընկերություն(ներ)ը պարտավորվում է(են) ոչնչացնել Ակցիայի շրջանակում տրամադրված անձնական տեղեկատվությունն Ակցիայի ավարտից հետո 4 (չորս) շաբաթվա ընթացքում, եթե այլ ժամկետ չհամաձայնեցվի:

11.7. Մասնակիցն իրավունք ունի ցանկացած ժամանակ ծանոթանալ իր անձնական տվյալներին, պահանջել Կազմակերպչից ուղղել, ոչնչացնել կամ սահմանափակել իր անձնական տվյալների մշակումը՝ դիմելով Կազմակերպչին հետևյալ էլեկտրոնային հասցերի միջոցով. DataProtectionOffice@cchellenic.com:

11.8. Անձնական տվյալների մշակման վերաբերյալ հարցերի կամ բողոքների պարագայում Մասնակիցները կարող են կապ հաստատել Կազմակերպչի անձնական տվյալների պաշտպանության պատասխանատուի հետ սույն կայքի միջոցով՝ DataProtectionOffice@cchellenic.com կամ անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնին:

ԲԱԺԻՆ 12. ԾԱԽՍԵՐ ԵՎ ՀԱՐԿԵՐ

12.1. Ֆիզիկական անձանց համար սահմանված հարկերը, այլ վճարները, ծախսերը և պարտավորությունները, որոնք կարող են առաջանալ Շահում(ներ)ի ստացման կապակցությամբ և որոնց կատարման պարտականությունն օրենսդրությամբ սահմանված կարգով չի կրում Կազմակերպիչը, վճարվում են Շահում(ներ)ը Շահողի կողմից, եթե այլ բան չորոշվի Կազմակերպչի կողմից իր սեփական հայեցողությամբ:

12.2. Կազմակերպիչը որևէ պատասխանատվություն չի կրում սույն Ակցիային մասնակցելու հետ կապված որևէ ծախսերի համար, որոնք Մասնակիցները կարող են կրել Թեժ Գծին զանգահարելու, Կազմակերպչի Վեբ Կայքը այցելելու, Շահումները հայցելու և/կամ Կազմակերպչին և/կամ Կազմակերպչի տարածքային ստորաբաժանումները այցելելու համար:

ԲԱԺԻՆ 13. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱԿՑԻԱՅՈՒՄ

13.1. Կազմակերպիչն իրավունք ունի ցանկացած ժամանակ չեղյալ համարել, կասեցնել սույն Ակցիան, կրճատել կամ փոփոխելել սույն Ակցիայի ժամկետը, ինչպես նաև փոփոխել Ակցիայի Կանոնների դրույթներն ու պայմաններն՝ ինչպես որ նպատակահարմար կգտնի:
13.2. Կազմակերպիչն իրավունք ունի տեղեկացնել Մասնակիցներին այդպիսի փոփոխությունների մասին՝ իր կողմից իր հայեցողությամբ ընտրված ազգային մամուլում կամ միայն Վեբ Կայքում հայտարարություն/տեղեկատվություն տեղակայելով (այսուհետ՝ **Հայտարարություն**): Այդպիսի Հայտարարությունը բավարար կհամարվի Ակցիան չեղյալ համարելու, դադարեցնելու, ժամկետը կրճատելու կամ փոփոխելուգելու, Ակցիայի Կանոններում փոփոխություններ կատարելու մասին սպառողներին տեղեկացնելու համար:

ԲԱԺԻՆ 14. ԿՈԿԱ-ԿՈԼԱ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԸ

14.1. Ակցիայի սույն Կանոնների ոչ մի դրույթ որևէ Մասնակցին իրավունք չի տալիս տիրապետել կամ օգտվել Կոկա-Կոլա ընկերության (The Coca-Cola Company) վերոնշյալ ապրանքային նշաններից: Սույն կանոնների ոչ մի դրույթ, ինչպես նաև Ակցիային մասնակցելը ոչ մի իրավունք չի տալիս Մասնակցին օգտագործել կամ հիշատակել Կոկա-Կոլա ընկերության և Կազմակերպչի անունը, խորհրդանիշը, ապրանքային նշանները կամ հեղինակային իրավունքները մարքեթինգային կամ գովազդային նպատակներով և Ակցիային չվերաբերվող որևէ այլ նպատակներով՝ առանց Կոկա-Կոլա ընկերության նախնական գրավոր համաձայնության: Մասնակիցը ընդունում է և երբեք չի վիճարկելու Կոկա-Կոլա ընկերության ապրանքային նշանների վավերությունը կամ Կոկա-Կոլա ընկերության սեփականության իրավունքը դրանց նկատմամբ:
14.2. Եթե Մասնակիցը խախտում է Կոկա-Կոլա ընկերության ապրանքային նշանների նկատմամբ իրավունքները, Կազմակերպիչն իրավունք ունի պահանջելու, և Մասնակիցը պարտավոր է Կազմակերպչի առաջին իսկ պահանջով փոխհատուցել բոլոր այն վնասները, որոնք վերը նշված խախտման պատճառով կարող է կրել Կազմակերպիչը և/կամ Կոկա-Կոլա ընկերությունը և/կամ ցանկացած այլ լիազորված շշալցնող և/կամ Կոկա-Կոլա ընկերության ապրանքային նշաններով ապրանքների ցանկացած լիցենզավորված դիստրիբյուտորը, որն աշխատում է ցանկացած այլ տարածքում:
Սույն բաժին 14-ը գործում է նաև Ակցիայի ավարտից հետո:

ԲԱԺԻՆ 15. ԱԿՑԻԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

15.1. Սույն Ակցիայի Կանոններին կարելի է ծանոթանալ Վեբ Կայքում: Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք զանգահարել 8088 Թեժ Գծի հեռախոսահամարով:
ՍՈՒՅՆ ԱԿՑԻԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՎ՝ ԲՈԼՈՐ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ԻՆՔՆԱԲԵՐԱԲԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒՄ ԵՆ, ՈՐ ՆՐԱՆՔ ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱՑԵԼ ԵՎ ՀԱՍԿԱՑԵԼ ԵՆ ՍՈՒՅՆ ԱԿՑԻԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ. ԵՎ ՈՐ ՆՐԱՆՔ ԿՊԱՀՊԱՆԵՆ ԱԿՑԻԱՅԻ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆՆԵՐՆ ԱՌԱՆՑ ՈՐԵՎԷ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԵՎ ԲԱՑԱՌՈՒԹՅԱՆ:
«COCA-COLA»-Ն, «COKE»-Ը, «COCA-COLA ZERO SUGAR»-Ն, «COKE ZERO»-Ն, «FANTA»-Ն, «SPRITE»-Ը, ՈՒՐՎԱԳԾՈՎ ՇՇԻ ՁԵՎԸ ԵՎ ՇԱՐԺՈՒՆ ԺԱՊԱՎԵՆԸ, «THE COCA-COLA COMPANY» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՎԱԾ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐՆ ԵՆ: